

## ԻՆՉՈՒ ԼԱՆՔ

Ինչո՞ւ այսպէս լանի յուսարեկ  
Աւերակաց դէմ Անիի.  
Հիւսենի երգեր եւ ֆերբուածներ,  
Եւ փնտռենի մէջըն անցեալին  
Ինչ որ յաճախ մեզ կը քուի  
Անյետադարձ անցեալ մ'ինչպէս:

Ինչո՞ւ մենի տանի մեր զաւկին  
Կարօտախտով լեփ-լեցուն  
Դառնացած մուք սրտերով  
Յուշերը մեր հայրենի:

Եթէ չտանի մենի անոր  
Յոյսը մորէն գտնելու  
Տարիներով մեր տածած  
Խոր երազներն հայրենի,

Ինչո՞ւ պատմենի մենի անոր  
Վարդանի ուժն ու կորովն  
Երբ չենի տար մենի հայորդուոյն  
Իղձը որ ինի իր կարգին  
Դառնայ հերոս, նուիրեալ:

Ինչո՞ւ փնտռել անցեալին  
Մէջ՝ ինչ մենի մեր ուժերով  
Կրնանի դարձեալ ըստեղծել  
Այն բրտինենով ու սիրով  
Որ դարերով սընանեց  
Ժողովուրդ մը չարչարեալ:

Թող որ ամէն հայ օճախ  
Հրդեհ քանայ սրտերուն  
Մէջ յուսարեկ: Ու ամէն  
Հայ իր տաճ մէջ կառուցէ  
Նոր Հայաստան ցանկալի:

Թող ամէն հայ սրտին մէջ,  
Եկեղեցի կառուցէ,  
Որ հաւատենով ան դիտէ  
Մշուշապատ ապագան,  
Եւ հոն տեսնէ անսասան  
Բարգաւաճող բուրաստան:

**ԹՈՐԳՈՄ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ**